

ՀԱՐՑԱՇԱՐ

«ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ասպիրանտուրայի ընդունելության քննության համար (մասնագիտական)

1. Քաղաքացու իրավունակությունը, իրավունակության բովանդակությունը:
2. Քաղաքացու գործունակությունը: Էմանսիպացիա:
3. Քաղաքացիական իրավունքի սկզբունքները:
4. Տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները որպես իրավաբանական անձ:
5. Իրավաբանական անձանց ծագումը և դադարումը: Իրավաբանական անձի սնանկացումը:
6. Իրերը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ: Իրերի դասակարգումը:
7. Ներկայացուցչության հասկացությունը, կիրառման ոլորտը և տեսակները: Լիազորագիր:
8. Քաղաքացիական իրավահարաբերության առաջացման հիմքերը (իրավաբանական փաստեր, իրավաբանական կազմ):
9. Գործարքի ձևը և այն չպահպանելու իրավական հետևանքները:
10. Անվավեր գործարքների հասկացությունը և տեսակները: Գործարքը անվավեր ճանաչելու հետևանքները:
11. Հայցային վաղեմության ժամկետների ընդհատումը, կասեցումը, վերականգնումը:
12. Սեփականության իրավունքի ձեռք բերումը և դադարումը:
13. Սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական պաշտպանությունը: Վինդիկացիոն հայց և նեգատոր հայց:
14. Ընդհանուր սեփականության իրավունքի հասկացությունը և առաջացման հիմքերը, ընդհանուր սեփականության տեսակները:
15. Քաղաքացիաիրավական պարտավորության հասկացությունը և տեսակները:
16. Քաղաքացիաիրավական պայմանագրի բովանդակությունը:
17. Քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման կարգը:
18. Գրավը որպես պարտավորության ապահովման միջոց: Նրա տեսակները:
19. Պարտավորությունների դադարման հիմքերը (եղանակները):
20. Առուծախի պայմանագրի հասկացությունը, նշանակությունը, տարրերը, տեսակները:
21. Մատակարարման պայմանագրի հասկացությունը և նշանակությունը:
22. Ապրանքների մատակարարումը պետական կարիքների համար:
23. Վարձակալության պայմանագիր: Պայմանագրի տարրերը:
24. Ֆինանսական վարձակալություն (լիզինգ):
25. Շինարարական կապալի պայմանագրի հասկացությունը և կնքման կարգը:
26. Ուղղորդի և ուղեբեռան փոխադրման պայմանագիր:
27. Համատեղ գործունեության պայմանագիր:
28. Վնաս պատճառելուց բխող պարտավորությունների հասկացությունը և առաջացման պայմանները:
29. Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառած վնասը հատուցելը:
30. Հեղինակի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները:
31. Գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը և նրանց հատկանիշները:
32. Ժառանգումն ըստ օրենքի: Ըստ օրենքի ժառանգների շրջանակը:
33. Ժառանգումն ըստ կտակի: Ժառանգության պարտադիր բաժին:
34. Երաշխավորությունը և երաշխիքը որպես պարտավորության ապահովման միջոց:
35. Տուժանքը որպես պարտավորության ապահովման միջոց: